# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<24.08.2020թ>>

ք. Երևան

Սույն թվականի օգոստոսի 24-ին, ժամը 12.00-ին ՀՀ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջանի վարչական շենքում /Ն. Զարյան 27/ տեղի ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. Հ0-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2015թ նոյեմբերի 19-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (երկրորդ փուլ) Երևան քաղաքի 59 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

## Օրակարգ

Երևան քաղաքի 59 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային լսումների երկրորդ փուլում ներկա էին՝

- Երևանի քաղաքապետարանի Բնապահպանության վարչության պետ՝ Գ. Նազարյան
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ պարոն Գևորգյան,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Մարետա Ավետիսյան ,
- Շրջակա միջավայրի նախարարի խորհրդական՝ Ն.Սողոյան ,
- Կառույցի ճարտարապետներ՝ Վ. Բաղալյան և Գ. Հակոբյան
- Նախնական գնահայտման հայտի մշակող՝ Արամ Գալոյան և
- համայնքի բնակիչներ, Երևան քաղաքի ավագանիներ և այլ շահագրգիռ անձինք

## Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի Բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը, ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը:
Վ.Բաղալյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նշելով, որ նախատեսված է բազմաֆունկցիոնալ բազմաբնակելի համալիր երեք մասնաշենքերից համապատասխանաբար 18, 18, և 20 հարկայնությամբ, վերգետնյա և ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղի՝ բնակիչների քանակին համապատասխան: Կառուցապատման մակերեսը տոկոսայնությամբ 32% է, կանաչապատումը՝ 48% ըստ քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի: Նաև հավելեց, որ ընկերության կողմից մշակվել է տարածքի Կանաչապատման և արդիականացման նախագիծ, որը համաձայնեցվել է Երևան քաղաքապետարանի հետ:

Հանրային լսման ընդացքում Մամիկոնյանց 23/1 շենքի բնակիչ Լ.. Խալաթյանը ներկայացրեց կետեր, որոնք անվանեց նորմերի խախտում: Համաձայն բնակչի, տեղի ունեցած խախտուներից են եղել՝

- Քաղաքապետարանի կայքում հանրային լսումների առաջին փուլի մասին տեղեկության բացակայությունը,

- Տեղի բնակիչների կարծիքի անտեսում,
- ՇՄԱԳ-ի մասին պատշաճ իրազեկման բացակայությունը,
- Նախնական գնահատման հայտը ընդունվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՊՈԱԿ-ի կողմից՝ թերի լինելով,
- Քանդման աշխատանքները իրականացվել են առանց ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության,
- Քանդման ընդացքում աշխատել են միանգամից մի քանի շինարարական տեխնիկա,
- Շին նորմերի խախտում,
- Ըստ շին նորմերի՝ տվյալ տարածքի համար միկրոշրջանի տարածքային հաշվարկային խտությունը չպետք է գերազանցի 300 մարդ/հա, սակայն նախնական գնահատման հայտում ներկայացված բնակարանների քանակի՝ բնակիչների թիվը միջին հաշվարկով ստացվում է 2300:
- Ինսոլացիոն նորմերի խախտում:

Քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետ՝ Գ.Նազարյանը պատասխանեց բնակչին՝ թե ինչու հրապարակված չի եղել կայքում հանրային լսումների առաջին փուլի մասին հայտարարությունը, նշելով, որ մինչև այս տարվա հունվար ամիսը ոչ մի հայտարարություն հանրային քննարկումների մասին չի հրապարակվել կայքում և նշեց, որ բացի կայքից, հանրային լսման մասին հանրությունը տեղեկություն կարող էր ստանալ նաև թերթից ու տեղանքում փակցված թռուցիկներից:

Ճարտարապետ Գ.Հակոբյանը պատասխանեց խախտումների այն կետին, թե միկրոշրջանի տարածքային հաշվարկային խտությունը չպետք է գերազանցի 300 մարդ/հա, ասելով որ բնակչի ներկայացրած նորմը մեր տարածքին չի վերաբերվում, քանի որ այդ տարածքը պատկանում է վարչական շրջանի ոչ թե միկրոշրջանի, և պետկ է նաել ՀՀՇՆ 30-01-2014 VII. ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ, Աղյուսակ 3 որտեղ բնակչության քանակը կարող է 210 հա տարածքում հասնել 250 000-500 000, 215 հա 501 000 - 1 000 000, 220 հա 1 001 000 ից ավելի: Ավելացրեց նաև, որ ընկերության կողմից պահպանվել են օրենքով սահմանված բոլոր քաղաքաշինական նորմերը և ընկերությունը արդեն իսկ ստացել է ՀՀ Քաղաքաշինական կոմիտեի դրական եզրակացությունը աշխատանքային նախագծի վերաբերյալ, և ներկայացրեց հանրությունը այդ եզրակացությունը:

Ավելացրեց, որ տարածքի քանդման աշխատանքները իրականացվել են համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված քանդման թույլտվության:

Պատասխանելով 14 հարկանի բնակելի շենքի բնակչուհու մտահոգությանը Ինսոլյացիոն նորմերի վերաբերյալ ասեց խախտում չկա, քանի որ ըստ ՀՀՇՆ-ի պետք է ապահովվի նվազագույնը 2.5 ժամ տևողությամբ ինսոլյացիա: 14 հարկանի բնակելի շենքի ճակատը որը նայում է նախատեսվող շենքերի կողմ ինսոլացման տևողությունը մինիմալ 2,5 ժամվա փոխարեն կլինի 6,5 ժամ, առավոտյան 6:00-8:00 և 13:30-18:00:

Պատասխանելով Լ. Խալաթյանի մտահոգությանը թե ինչպես պետկ է տարահանվեն բնակիչները հրդեհի ժամանակ, ասեց որ նախատեսվող բնակելի համալիրի բակային տարածքը փակ է մարդատար մեքենաների համար և երթևեկությունը կազմակերպված է շենքերի արտաքին պարագծով: Իսկ հրշեջ մեքենաներին թույլատրվում է երթեվեկել սիզամարգի վրայով և կատարել իրենց աշխատանքը:

Շախսուվարյան փողոցի բնակիչը դիմեց ճարտարապետին ասելով, որ այդ տարածքում բազալտային գրունտ է և արդյոք ավտոկայանի փորման աշխատանքները ոչ մի բացասական հետևանքներ չեն թողնի իրենց շենքի վրա:

Ճարտարապետ Վ.Բաղալյանը պատասխանեց այդ հարցին ասելով, որ այդ տարածքում իրականացվել են գեոդեզիական և երկրաբանական հետազոտություններ և այդ տարածքում խճային գրունտ է, որի քանդման ընդացքում ոչ մի վնաս չի լինի հարակից շենքերին:

Հանրային քննարկումներին ներկա մի խումբ բնակիչներ կտրականապես դեմ են նոր բնակելի շենքերի կառուցմանը, քանի որ դրանք ունեն 18-20 հարկայնություն և, ըստ իրենց, ամբողջությամբ կստվերեն առկա շենքերը ու կնվազեցնեն առկա բնակարանների լուսավորությունը:

Բացի այդ, շինարարության տևողությունը նախատեսված է 6 տարի, ինչը չափազանց երկար ժամանակահատված է: Շինարարությունից տնական օդի աղտոտումը, աղմուկը, խցանումները, թոթոումները բացասական ազդեցություն կունենան տեղի բնակիչների առողջության վրա: Ավելին, բնակիչների կարծիքով, շինարարության հետևանքով առկա բնակարանների շուկայական արժեքը կարող է նվազել, ինչը ևս բացասական սոցիալական ազդեցություն կթողնի տեղի բնակչության վրա:

Բնակիչների կողմից առկա էր դժգոհություն առ այն, որ Տիգրանյան փողոցը ի սկզբանե նախատեսված է եղել կույրերի անցման համար, այսինքն այն չպետք է ունենա մեծ ծանրաբեռնվածություն: Մինչդեռ նոր բնակելի շենքերը լուրջ վտանգներ կստեղծեն կույրերի համար նախատեսված կառույցների համար:

Մեկ այլ դժգոհություն էլ կապված էր ստեղծվելիք կանաչ տարածքների հանրամատչելիության հետ: Մասնավորապես, բնակիչները ցանկանում էին, որպեսզի երաշխիքներ տրամադրվեն, որ նորաստեղծ կանաչ տարածքը մատչելի կլինի ոչ միայն նորակառույց, այլև առկա շենքերի բնակիչների համար:

Մամիկոնյանց 23/1 շենքի բնակիչ Լ. Խալաթյանը վերջում նշեց, որ իր նպատակն է չեղարկել հանրային լսումների առաջին և երկրորդ փուլի արդյունքները, նաև ավելացրեց, որ այս լսումները անօրինական լսումներ են: Բնակիչները դեմ են այդ նախագծին: Նրանք գտնում են, որ պետք է վերանայվի նախագիծը և համապատասխանեցվի բոլոր նորմերին:

Քաղաքապետարանի Բնապահպանության վարչության պետ՝ Գ. Նազարյանը վերջում ավելացրեց, որ բնակիչները իրենց կարծիքը գրավոր կերպով ներկայացնեն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ին: ՊՈԱԿ-ը այդ կարծիքները կուղարկի մասնագիտացված կառույցներին և կստանա համապատասխան մասնագիտական պարզաբանումներ: Դրանից հետո ամփոփելով այդ բոլոր դիտողությունները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ը կտա իր դրական կամ բացասական եզրակացությունը:

Անհրաժեշտ է նշել, որ հանրային քննարկումների ընթացքում որևէ բնապահպանական հարց կամ դժգոհություն չի ներկայացվել բնակիչների կողմից, բոլոր նշված հարցերը վերաբերվում են քաղաքաշինական ոլորտին:

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

- Գրավոր տեսքով ուղղել բնակիչների հարցերը, և սպասել համապատասխան մարմինների պատասխաններին և մասնագիտական դիտարկումներին:

Վարող – Գ. Նազարյան

Արձանագրող –

Քննարկումների պատասխանատու- Գ. Նազարյան

Զեկուցող – «Երևանի Լուսատեխնիկ» ԲԲԸ տնօրեն՝ Է. Վանյան

22 թ. Երևան քաղաքի Կոմիտաս 59 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների (երկրորդ փուլ) մասնակիցների ցանկ:

| ԱԱՀ | Կազմակերպություն/պաշտոն | Ստորագրություն |
|---|---|---|
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] 23/12 | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |
| [illegible] | [illegible] | |

Александар Јовановић. Александар Јовановић

Александар Петров

А41 ПРОЈЕКТ

Александар Александровић

А41 PROJECT

Оливер Радуловић. Оливер Радуловић

Индикатор

Оливер Радуловић